

ստացել որ ժողովրդին հրաւէր ուղղեց նոր-ընտրութիւն կատարելու. ժողովի օրը, երկրորդ ժողովում ընտրուած հոգաբարձուները երբ լսեցին Վեհափառի հրամանի մասին, չափազանց զարմացան տեսնելով որ Ե. Վ. -ի պահանջը բոլորովին հակառակ է նրան. (կոնգալը կամ ստացուած չէր և կամ և կամ եթէ ստացուած էլ էր երևան չէր հանուած մինչև այդ օրը)

Ե. Շատ ընտանի էր Լիւլաւայի ծխականներէ բողոքակիր արձանագրութիւնը և շատ տեղին նրանց գործածած լեզուն: «Դասն տարուայ ուսուցիչն» պ. Գ. Զիլինկիրեանը, եթէ չենք սխալուում, Թաւրիզ է եկել 1894—95 թուերին իբրև տեսուչ Արամեան և Ս. Աննայեան երկսեռ դպրոցների. մի քանի տարի այդ պաշտօնը վարելուց յետոյ, զանազան պատճառներով զբոսելու է տեսչութիւնից և դառել հոսարակ ուսուցիչ, Իբրև ուսուցիչ նա պաշտօն է ունեցել և Լիւլաւայի դպրոցներում, որտեղ նրանից անբաւական լինելով մի տարուայ ուսուցչութիւնից յետոյ արձակուում են: Դարձեալ յաջողուած է նրան մանկ Դաւայի դպրոցը, ըստ 1901—1902 տարուայ վերջում առաջնորդ Նդիշէ վ.-ի ցանկութեամբ հեռացնում են նրան՝ պատճառարանով որ նա չափազանց կարճատես է: Ահա այդ քսան տարուայ ուսուցիչն» պ. Զիլինկիրեանն էր որ տեսուչ էր նշանակուած Լիւլաւայի դպրոցներին չայր Մուրադեանի կողմից:

Համաձայն կանոնադրութեան՝ ժողովը տեղի է ունեցել Լիւլաւայի սրահում, որտեղ կազմուել է և արձանագրութիւնը 86 հոգու ստորագրութեամբ—տակի շատ ծխականներից քան հոգաբարձական արձանագրութիւնն էր ստորագրուած:

Եւ այս պատգամաւորները, ինչպէս տեսնում է ընթերցողը, ընտրուել էին մի բազմանդամ և կանոնաւոր ժողովում, որը տեղի էր ունեցել հասարակութեան ներկայութեամբ, և ոչ դռնէ-դռու պըտտեցեալ թղթի վրայ հաւաքած ստորագրութիւններով, ինչպիսին անում էին ոմանք...

Եւ ի՞նչ մեծ և մահացու մեղք են գործել աշակերտները, որ Եւս խոնարհ խնդրադրով դիմել են և ցանկութիւն յայտնել, որ 5 տարի շարունակ իրանց դաստիարակող ուսուցչական խումբը, որ այնքան շատ համակրանք և սէր էր ձեռք բերել թէ աշակերտների և թէ հասարակութեան մէջ—չփոխուի, մնայ նոյնը *):

Մ. Սահակեան

III

Լիւլաւայի դպրոցների մասին շատ գրուեց պարբերական թերթերում: Այս տարուայ «Մուրճ»-ի մէջ էլ լույս է տեսել Նդիշէ ծ. վ. Մուրադեանի «Ո՞վ փակեց Թաւրիզի Լիւլաւ-Թաղի դպրոցները»: Որովհետեւ այդ յոդուածի մէջ մի քանի կէտեր ինձ և իմ տեսչութեան օրով դործող ուսուցչական խմբին են վերաբերում, խնդրում եմ թոյլ տաք և ինձ մի քանի խօսք տակ *):

*) Խնդիրը պարզուած համարելով, չենք տպում այս ընդարձակ պատասխանի մնացած մասը: Ցանկալի է որ անցեալը լաւ դաս լինէր Թաւրիզի հասարակութեան և նոր առաջնորդի համար. երկու կողմերն էլ պէտք է հասունութիւն և տակաւ ցոյց տան ազգային գործերը սահմանադրական ոգւով վարելու:

*) Նոյն պատճառով առաջ ենք բերում յօդուածագրի մի միտք եղբակցութիւնները:

1) Եթէ Ե. ծ. վ. Մուրադեան կարողանար կանոնաւոր ընթացք տալու հոգաբարձական ընտրութեանը, 2) եթէ պէթ իր իշխանական բարձրութիւնից մի քիչ խոնարհուէր և ընդունէր իմ առաջարկը՝ Համբարձման դէպքի առթիւ քննութիւն նշանակելու և, 3) վերջապէս եթէ անտեղի կերպով նախամանախակէր ուսուցչական խումբ կազմելու իրաւունքը, այն ժամանակ ոչ ես կը հեռանայի և ոչ էլ նորանոր բարդութիւններ առաջ կը դային:

Իմ հեռանալուց ու վերջնականապէս հրաժարուելուց յետոյ, երբ Ե. ծ. վ. Մուրադեան չկարողացաւ մի տեսուչ ճարել, գոնէ իրան թոյլ չպիտի տար աշակերտներէից շատ լաւ ճանաչուած ու չյարգուած մի ուսուցչի տեսչի պաշտօնակատար նշանակելու, թէկուզ ժամանակաւորապէս. նա՛ իր հոր բարձրութեան հետ միասին վերջապէս չպիտի թոյլ տար տեսուչ հրաւիրելու մի անձնաւորութեան, որը վերջերում հետեւից հեռու անհամակրելի դիրք էր բռնել դէպի Լիւաւայի դպրոցների ուսուցչական խումբն ու աշակերտները: Բնական էր, որ IV, V և VI դասարանի աշակերտները (18—20 տարեկան) պիտի սկսէին, արդարացի բողոքներ բարձրացնել. բնական էր, որ նրանցից սկսած շարժումները անցնէին նաև ստորին դասարանցիներին:

Իսկապէս, Ե. ծ. վ. Մուրադեան իր տակտով, իշխանական ու աղայական ձգտումներով, Թաւրիզի Լիւաւա-թաղի դպրոցների մի տարուայ փակման ու ամբան աղմուկների պատճառը դառաւ:

Մի վերջին խօսք և ես իմ պատասխանը կ'աւարտեմ: Ե. ծ. վ. Մուրադեան իր յօդուածի վերջում սպառնում է մի շարք դոկումենտներով, որոնց շարքում կան նաև քրէական բնաւորութիւն ունեցողներ ("). շատ լաւ կ'անէ, որ բոլորը լոյս աշխարհ հանէ և հասարակութեան դատաստանին յանձնէ. այն ժամանակ միայն կարելի է այդ բոլորի արժէքը չափել:

Ինչ վերաբերում է նրա առաջարկին, թէ այսուհետև իրան մեղադրողներին հրաւիրում է միջնորդ դատարանի, դա անելի քան ծիծաղալի է ինձ համար: Ե. ծ. վ. Մուրադեան իր այդ մտածմունքով՝ ձրտեղ էր, երբ Համբարձման դէպքի համար քննութիւն ու դատ խնդրեցի. այն ժամանակ մերժեց իր իշխանական բարձրութեամբ, երբ կարելի էր մի դրական բան անել. այժմ ձրտեղից կարող է համախմբել գործի հետ մօտիկ կապ ունեցող մարդկանց: Ինչ կայ, հեշտ է դատ առաջարկել, որը եթէ ոչ անհնարին, գոնէ դժուար իրագործելի է:

Տիգրան Ռնշմաճեան

24 ապրիլ, 1905 թ.

Բագու